*աՄր[վ][1], Մուտ, Հրեւ, Գադշան, Գոզկան[2], յորում լինի ձի արքունական, Գոզբոն՝ մինչեւ ցգետն, զոր կոչեն Արանգ։* 272 *Ջորմէ առասպելեն, թէ ծծումբ բերէ, լայն է եւ անհուն, որ թ[ո]ւի[3], թէ Փիսոն է, զոր Պարսիկք Վեհռոտ կոչեն։* 273 *Եւ անհուն ասելն առ ի միտս է, վասն զի հզաւր ազգաց Պարսից եւ Հնդկաց անճանապարհ եւ անանց է՝ պա[յ]մանաւ[4]։* 274 *Եւ Հրեւ դաշտն՝ եզր արեւելեա[յ] Վրկան աշխարհին, ուր է Վանդգէս գաւառն, ուր վկա[յ]եցին սուրբքն մեր առաջնորդ[5], Խուպ-ի Տուխարստան աշխարհ ասեն.* [34բ] *եւ լինի անդ մուշկ, թէպէտ՝ ոչ ազնիւ։* 275 *Եւ թուի, թէ գերութիւն Հրէից[6] ի յայս Կոզական աշխարհս բնակեցան, զոր Գիր ասէ՝ բնակել առ գետովն Գոզանա[յ][7]։* 276 ***[Եւ կղզի մի է[8]՝ հանդէպ Արեաց ի Հնդկաց ծովուն[9], յորում թզուկք լինին[10] երեքթզեան հասակաւ, որք[11] պատերազմին ընդ խորդոց[12] հաւուց՝ վասն ճարակելոյ նոցա զանդաստանս թզկացն][13]։***

277 *Եկեալք յարեւելս՝ դարձցուք առ հիւսիʻսի[14]։*

278 ***ԽԱ.**[15] Աշխարհ Ասիո[յ] Սկիւթիա[16] է, որ սկսանի յԱթլ գետո[յ] եւ [ձգէ][17] զերկայնութիւն իւր առ ի շեղ յելս հարաւոյ մինչեւ ցԻմաւոն լեառն (եւ որպէս թէ Իմաւոն լերեամբն[18] յերկուս[19] բաժանեալ է Սկիւթիա, որ են Ապխրտարք[20], որ են Թուրքաստանք), ըստ հիւսիսո[յ][21]՝ Անծանաւթ երկրաւ, եւ ըստ մտից՝ Սարմատաց[ւ]ոց[22] աշխարհաւ, առ յԱթլ գետով, եւ [ի] հարաւ[ոյ]՝ ը[ստ Վ]րկան ծով[ով]ն[23] եւ Արե[ա]ւք[24] եւ Հնդկաւք առ հարաւա[յ]ին բազկաւն Իմաւոն լերինն եւ անդր[25] եւս մինչեւ ցԻմոդա[յ] լեառն, որ եւ նա բաժանէ [զ]Սկիւթիա[26] ի Հնդկաց։* 279 *Իսկ ըստ յելից կուսէ սահմանի ի Ճէնաց[27]։*

---

1 *VS* Ամր *փխ* աՄր[վ] *(վեր.՝ ըստ նախ. Ե.246-ի)*

2 *Բառի* զ*-ի վերեւում, թւում է, թէ նոյն ուշ ձեռագրով կարմրով գրուած է շ տառը. նախորդ անունը նախ. Ե.246-ում* Կատաշան *ձեւով էր*

3 *V* թւի *փխ* թուի *(վեր. Սուքրեանի)*

4 *V* պամանաւ *փխ* պայմանաւ *(վեր. Սուքրեանի)*

5 *Սուքրեանը ծանօթագրել է.* «Այսինքն Ս. Ղեւոնդեանք, որպէս եւ Ղազար Փարպեցի (գլ. Ծ. ԾԷ.) Վարդգէս կոչէ զգաւառն՝ ուր վկայեցին նոքա»

6 *Տողից* (թէ գերութիւն Հրէից ... բնա/կեցան) *ձախ, լուսանցքում կայ ծանօթ ոլորազարդը*

7 *Այս բառի* զ*-ի վերեւում կայծակնաձեւ նշան է դրուած, եւ ձախ լուսանցքում նոյնպիսի նշանի տակ գրուած է շ տառը (թերեւս, ուշ «սրբագրողը»* *նկատի է ունեցել* «Քուշանք» *երկրանունը)*

8 *AE չիք* է *(DPv)*

9 *AE* ծովու *փխ* ծովուն *(DPv)*

10 *AE* լինի *փխ* լինին *(DPv. հմմտ. նախ. Դ.40, Ե. 242, 302, 304)*

11 *AE* եւ *փխ* հասակաւ, որք *(DPv)*

12 *DPv* խորդուց *փխ* խորդոց *(AE)*

13 *AE* Հնդկաց *փխ* թզկացն *(DPv) / VS չիք* Եւ կղզի մի ... թզկացն *(5 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի)*

14 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիʻսի *(վեր.՝ ըստ այլոց)*

15 *V* լե̅, *S* ԼԴ. *փխ* ԽԱ. *(վեր.՝ ըստ նախորդ աշխարհահամարների)*

16 *Ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, երկար պատուոյ նշանների մէջ, 3 տողով «ծանօթագրուած» է.* «Աշխարհ թու/րքաստ/ան» *(առաջին բառը՝ ալիքաձեւ գաղափարագրով՝ պատուոյ նշանի տակ), որի մասին Սուքրեանը եւս ծանօթագրութիւն ունի.* «Ի լուսանցս գրեալ է *Աշխարհ Թուրքաստան*»

17 *VS չիք* ձգէ *(վեր.՝ ըստ յաջորդ բառի հայցականի, հմմտ. նախ. Գ.27, Ե.71, 201, 284)*

18 *V* լերեամբն *փխ* լերամբն *(վեր. Սուքրեանի, հմմտ. նախ. Բ.4, Գ.5, Ե.69, 134, 283 եւն)*

19 *V* յ.բ̅. *փխ* յերկուս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*

20 *V* Ապխրտարք *փխ* Ապխտարք *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Բ.22. հմմտ. Ե.90՝* Ապախթարք. *համառօտի բնագիրն է.* «որ (*DPv* որք) են Ապախտարք (*AE* նախապատարք), այսինքն՝ Թուրք»*)*

21 *S* հիւսիւսոյ *փխ* հիւսիսո[յ] *(V. հմմտ. նախ. Ա.4, 27, Բ.2, 8, Գ.9, Դ.46, Ե.2, 96 եւն)*

22 *VS* Սարմատացոց *փխ* Սարմատաց[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

23 *V* հարաւ ըիկան ծովն, *S* ի հարաւ Վրկան ծովն *փխ* [ի] հարաւ[ոյ]՝ ը[ստ Վ]րկան ծով[ով]ն *(վեր., տե՛ս* եւ **ի** **հ**արաւ → եւ հարաւ, հար**աւո** → հա-ր**աւ**, ը̅ **Վ**րկան → ը̅**ւի**կան → *ը̅**ի**կան, ծ**ով**ո**վ**ն → ծ**ով**ն*)*

24 *V* Արեւք *փխ* Արեաւք *(վեր. Սուքրեանի)*

25 *V* անտր *փխ* անդր *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Դ** → **Տ**. *հմմտ. նախ. Ա.39, Բ.37, Գ.73, Դ.38, Ե.74, 136 եւն)*

26 *V* Սկիւթիա *փխ* զՍկիւթիա *(վեր. Սուքրեանի)*

27 *VS* Ճենաց *փխ* Ճէնաց *(վեր.՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.285, 328, 330)*